Հավելված

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի

2024 թվականի մարտի 1-ի թիվ 212 Ն/Մ հրամանի

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

«ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԱՐՈՒՆ-2024» ՓԱՌԱՏՈՆԻ

1. Ընդհանուր դրույթները

«Ուսանողական գարուն-2024» փառատոնը կազմակերպվում է «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի նախաձեռնությամբ և միտված է ուսանողների գեղարվեստական կրթության, գեղագիտական դաստիարակության զարգացմանն ու մշակութային գործունեության ակտիվացմանը: Այն անցկացվում է ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքում:

2. Փառատոնի նպատակը

Փառատոնի նպատակն է հայտնաբերել, խրախուսել, աջակցել շնորհալի ուսանողներին, նպաստել նոր սերնդի և քաղաքացու գեղագիտական ճաշակի ձևավորմանը, խթանել և աշխուժացնել գրական-մշակութային կյանքը:

3. Փառատոնի ժամկետները, մասնակցության չափանիշները և անդամագրման կարգը

Հայտերի ընդունման վեջնաժամկետն է 2024թ. ապրիլի 25-ը:

Փառատոնն անցկացվելու է 2024թ. մայիսի 10-ին՝ մեկ փուլով: Մայիսի 11-ին կկայանա փառատոնի փակման արարողությունը:

ա) Մասնակցել կարող են անհատապես և խմբերով:

բ) Փառատոնին կարող են մասնակցել միջին մասնագիտական (քոլեջ, ուսումնարան) և բարձրագույն ուսումնական հաստատությունների *ուսանողները:*

գ) Փառատոնի մասնակիցը պետք է լինի հայտատու ուսումնական հաստատության ուսանող և չի կարող ներկայացնել որևէ այլ ուսումնական հաստատություն:

դ) Փառատոնին ներկայացված հայտերի ծրագրերը փոփոխման ենթակա են մինչև հայտերի ընդունման վերջնաժամկետի ավարտը:

Փառատոնն անցկացվելու է հետևյալ անվանակարգերում՝

1. Մեներգեցողություն (դասական, ժողովրդական,էստրադային)
2. Երգչախումբ կամ վոկալ անսամբլ
3. Վոկալ-գործիքային անսամբլ
4. Դասական գործիքներ (մենակատարներ և համույթներ)
5. Ժողովրդական գործիքներ (մենակատարներ և համույթներ)
6. Թատերարվեստ (մոնոներկայացում, մանրապատում, ասմունք, ներկայացում,մնջախաղ)
7. Պարարվեստ - *մենապար կամ խմբակային պար* (ազգագրական, ժողովրդական, ժամանակակից)

Մեներգեցողություն (ժողովրդական, դասական, էստրադային երգ) անվանակարգի մրցութային ծրագիրը ներառում է 1 ստեղծագործություն (մինչև 5 րոպե)

Երգչախումբ կամ վոկալ անսամբլ անվանակարգի մրցութային ծրագիրը ներառում է 2 ստեղծագործություն (մինչև 6 րոպե)

Վոկալ-գործիքային անսամբլ անվանակարգի մրցութային ծրագիրը ներառում է 1 ստեղծագործություն (մինչև 6 րոպե)

Դասական գործիքներ (մենակատարներ և համույթներ) մրցութային ծրագիրը ներառում է 1 ստեղծագործություն (մինչև 6 րոպե)

Ժողովրդական գործիքներ (մենակատարներ և համույթներ)

Թատերարվեստ (մոնոներկայացում, մանրապատում, ասմունք, ներկայացում,մնջախաղ) անվանակարգի մրցութային ծրագիրը ներառում է.

1. ասմունք՝ 1 ստեղծագործություն (մինչև 3 րոպե տևողությամբ)
2. մոնոներկայացում, մանրապատում (մինչև 20 րոպե տևողությամբ)
3. ներկայացում (մինչև 20-40 րոպե տևողությամբ)
4. Մնջախաղ (մինչև 5 րոպե տևողությամբ)

Թատերական խմբերը պետք է հանդես գան իրենց ռեկվիզիտներով (հնարավորության դեպքում՝ ըստ նախօրոք ներկայացված տվյալների, փառատոնի կազմկոմիտեն նրանց կապահովվի ռեկվիզիտներով):

Պարարվեստ՝ *մենապար կամ խմբակային պար* (ազգագրական, ժողովրդական, ժամանակակից պար) մրցութային ծրագիրը ներառում է 1 ստեղծագործություն (մինչև 3 րոպե):

4. Փառատոնի անցկացման կարգը և անվանակարգային մրցանակները

1. Փառատոնի մասնակիցները կատարում են հայտով ներկայացված ստեղծագործությունները:
2. Ելույթները գնահատում է մասնագիտական հանձնախումբը, որի կազմը չի հրապարակվում մինչև տվյալ լսումների մեկնարկը:
3. Մասնագիտական հանձնախմբի որոշումները վերջնական են և բողոքարկման ենթակա չեն:
4. Փառատոնի մասնակցի վաստակած միավորները կարող են չեղյալ համարվել, եթե.

   ա) նա, իր նվագակցողը կամ ներկայացուցիչը փառատոնի շրջանակում խախտում է մրցույթ-փառատոնի կանոնակարգի որևէ կետ,

   բ) վնասում է գույքը,

   գ) բարոյական կամ ֆիզիկական վիրավորանք է հասցնում հանդիսատեսին, փառատոնի կազմկոմիտեի անդամի (անդամների), այլ մասնակցի (մասնակիցների), հանձնախմբի որևէ անդամի (անդամների),

   դ) փորձում է որևէ կերպ ազդել նշանակված գնահատականի վրա:

Սահմանված են ***սիրողական.***

1) առաջին, երկրորդ և երրորդ կարգի մրցանակներ (մրցանակային տեղերը կարող են բաշխվել մի քանի մասնակիցների միջև)
2) խրախուսական պատվոգրեր

մասնագիտական.

1) առաջին, երկրորդ և երրորդ կարգի մրցանակներ (մրցանակային տեղերը կարող են բաշխվել մի քանի մասնակիցների միջև)

Փառատոնի Գալա-համերգին կմասնակցեն փառատոնի արդյունքում լավագույնը ճանաչված անհատ կատարողները և համույթները:

Ֆորս-մաժոր

Փառատոնն ամբողջությամբ կամ մասնակի կարող է հետաձգվել կամ չկայանալ ֆորսմաժորային իրավիճակների դեպքում (աղետներ, պատերազմ, հասմաճարակ, էլեկտրաէներգիայի անջատում և այլն), որոնք չեն կարող կարգավորվել փառատոնի կազմակերպիչների կողմից):